Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ГОРԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ
   Արամ Մեյմարյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ
   Ֆիլիպինների Հանրապետություն (քաղաք Մանիլա)
   2023թ. նոյեմբերի 6-ից 10-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ
   Ասիական զարգացման բանկ

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ
   Մասնակցություն «Բնական կապիտալի գնահատման և հաշվառման հիմնական ուղղման միջոցով քաղաքականության և ներդրումների վերափոխում» խորագրով տարածաշրջանային աշխատաժողովին

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Հանդիպումների ժամանակ քննարկվել են հետևյալ թեմաները.

- Բնական կապիտալի վերաբերյալ մոտեցումներում, քաղաքականությունում և ֆինանսներում դրանց ինտեգրման վերաբերյալ տեղեկացվածության և ըմբռնման բարձրացում,
- Բնական կապիտալի գնահատման և հաշվառման հիմքի ստեղծում,
- Բնական կապիտալի գնահատման և հաշվառման վերաբերյալ ըմբռնման խորացում,
- Բնական կապիտալի պահպանման համար ֆինանսական լուծումների մշակում:

## 7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

Հանդիպումները մեկնարկել են Մանիլայում, Ֆիլիպինների Հանրապետությունում, որոնց մասնակցել են մասնակիցներ 13 երկրներից, միջազգային գործընկերներից, ՔՀԿ-երից և վերլուծական կենտրոններից:

Ֆորումի նպատակներն էին.

**- Բարելավել բնական կապիտալի մոտեցումների վերաբերյալ իրազեկությունն ու ըմբռնումը**. խորացնել մասնակիցների իրազեկությունն ու ըմբռնումը բնական կապիտալի հայեցակարգի, բնական կապիտալի գնահատման և հաշվառման պրակտիկայի և քաղաքականության և ֆինանսական որոշումների կայացման մեջ նրանց դերի և կայուն զարգացման կարևորության վերաբերյալ: Փորձագետների կողմից ղեկավարվող ներկայացումների, դեպքերի ուսումնասիրությունների և ինտերակտիվ քննարկումների միջոցով մասնակիցները ձեռք բերեցին ամբողջական և գործնական պատկերացում բնական կապիտալի մոտեցումների և դրանց կիրառման քաղաքականության և ֆինանսական որոշումների վերաբերյալ:

**- Ամրապնդել համապատասխան քաղաքականությունը և կենտրոնանալ գործնական իրականացման վրա, հեշտացնել բնական կապիտալի մոտեցումների ինտեգրումը ազգային և միջազգային քաղաքականության, շրջանակների և զարգացման պլանների մեջ:** Բացահայտվեցին և քննարկվեցին բնական կապիտալի սկզբունքները գոյություն ունեցող քաղաքականության շրջանակներին համապատասխանեցնելու հնարավորությունները, որպեսզի այդ մոտեցումները կիրառվեն՝ օգնելու հասնել զարգացման ազգային ծրագրերում, բնապահպանական կանոնակարգերում, միջազգային համաձայնագրերում և այլ մեխանիզմներով սահմանված նպատակներին: Փորձագետները և մասնակիցները կիսվեցին փորձով և մարտահրավերներով՝ կիրառելով բնական կապիտալի մոտեցումները՝ գնահատումները կապելով քաղաքականության, ներդրումների և ներկառուցված նախագծերի հետ:

**- Խթանել կայուն ֆինանսական լուծումները և կենտրոնանալ դրանց գործնական իրականացման վրա:** Մասնակիցները քննարկեցին և վերլուծեցին ֆինանսավորման տարբեր մեխանիզմներ, ինչպիսիք են կանաչ պարտատոմսերը, ազդեցության ներդրումները և պետական-մասնավոր գործընկերությունները, որոնք օգտագործվում են բնական կապիտալի պահպանման և վերականգնման հետ կապված նախագծեր և նախաձեռնություններ ֆինանսավորելու և ապագա կիրառման ներուժի համար:

Համախմբելով ՄԶԲ-ների, կառավարությունների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին՝ այս ֆորումը խթանեց երկխոսությունն ու համագործակցությունը՝ խրախուսելով հարմարեցված ֆինանսական լուծումների մշակումը բնական կապիտալում ներդրումներ կատարելու հատուկ մարտահրավերներին և հնարավորություններին դիմակայելու համար:

## 8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայաստանյան պատվիրակությունը ներկայացրեց Հայաստանում բնապահպանական հիմնական մարտահրավերները, բնական կապիտալի և էկոհամակարգային ծառայությունների հետ կապված ներկա իրավիճակը, քաղաքականությունն ու ընթացիկ ծրագրերը, հիմնական գերակայությունները:

Ձեռք բերվեց համաձայնություն Սթենֆորդի համալսարանի օժանդակությամբ բնական կապիտալի և էկոհամակարգային ծառայությունների գնահատման մոտեցումները ներդնել ԱԶԲ աջակցությամբ մշակվելիք Արարատյան ջրավազանային կառավարման 2025-2031 թթ. պլանում:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համատեղ իրականացնել Արարատյան ջրավազանային կառավարման պլանը 2025-2031 թվականների համար՝ հաշվի առնելով նաև բնական կապիտալի մոտեցումները: Ծրագրի շրջանակներում պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև վերլուծել հայաստանյան տուրիստական ամենաշատ այցելվող վայրերը և դրանց հարևանությամբ բնության հատուկ պահպանվող տարածքները, ինչպես նաև, նախնական բանավոր համաձայնությամբ, նախատեսվեց Հայաստանում բնական կապիտալներից մեկի գնահատում:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյան

15.11.2023թ.